

## ՕՐԵ ԿԻՒԲԱԿԻ Է՛ ԵՐԱՋԸ ՍՈՒՏ

### ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏԿԵՐ

— 20 —

Քարափի թաղեցի էր (1) Աղալօ Շաքարովն եւ շատ լաւ աղայ էր : Աղալօն իւր կեանքում ոչ ոքի սիրտ վիրաւորած չէր եւ իւր գլուխը ճանաչած օրից՝ բնաւ սոււս խօսեցած չէր : Ո՞վ չէր ճանաչում Աղալօյին . Թիֆլիսի Բազաղիսանի (2) ո՞ր մէկ հարուստ մազաղինի տէրը Աղալօյի պատրաստած , ձիւնի նման սպիտակ ոչխարի ոս ու գլուխը , հալալ աղիքներն ու թափանը (3) խաշ չի դնել տուել , սխառով անուշ արել , մի երկու բաժակ կախեթի կարմիր գինին էլ վրէն խմել ու Աղալօյին կեանք խնդրել :

Ուրիշ արհեստ չունէր Աղալօն , նա մանկուց որրացել էր իւր նալբանդ (4) հօրից , մօր մինունար էր մնացել : Մօր ձեռքիցն էլ ուրիշ գործ չէր եկել , աստուածասիրի մէկը նրան ոչխարի ոսն ու գլուխ մաքրելն ու ծախելն էր խորհուրդ տուել :

Են օրից մինչեւ հիմք՝ օրական մէկ , կամ առ առաւելն՝ երկու ոչխարի խաշ մայրը պատրաստել է , իսկ որդին փայտէ խոնչայի (մեծ ափսէ) մէջ դրած՝ ձեռքին փողոցէ փողոց պատեցրել է , աշխատածը տուն է բերել եւ մայր ու որդի հալալ կաթնակերի պէս ապրել հն :

Աղալօյի մայր Մաթօն նմանապէ՛ս վատ կին չէր . յրիստոնեայ ու ժամասէր Աղամորդի էր , կեանքումը ոչ մի օր ժամ գնալուց եւ ուխտ անելուց յետ չէր մնացել : Թէկուզ ծնկնահար ձիւն նստած լինէր , թէկուզ իւրեանց լաւ մուշտարիներին (5) տասը ոչխարի ոսն ու գլուխ շինելու եւ տանելու խօսք տուած լինէին , Մաթօն դեռ պիտի գնար իւր ուխտն անէր , իւր երկու կոպէկանոց մոմը վառէր սուրբ Գէորգի հրաշագործ ձիու ոտի տակին , ձիու արծաթեայ սմբակը համբուրէր . իր «Հայր մեր երկինքն» , իր 12 տէրողորմեան ասէր , նոր շտապէր իր փոքրիկ խրճիթը մաքրէր . իր գունն ու տունը սրբէր , կրակը վառէր , պղինձն օջաղին դնէր , օրուան ճաշը կարգի դնէր . նոր գործի նստէր :

Պէտք է ասենք , որ տունը վարձով չէր . դէղա (6) Մաթօյի մօրից էս փոքրիկ խրճիթը նրան ժառանգութիւն էր մնացել , բաժինքումն էր ստացել :

(1) Քարափի թաղը Թիֆլիսի լեռնալանջի վրայ է գտնւում : (2) Բազաղիսանան կտաւեղէնի վաճառանցն է : (3) Փորոտիք : (4) Պայտան : (5) Գնորդ : (6) Դէղա՝ վրացու բառ է , նշանակում է մայր :

Դէզա Մաթօն , այսպէս էր ճանաչուած նա հարեւաններից եւ ու բիշներից , զիտէք , որ ճաշուայ թնդանոթը (1) որ արձակեն թէ չէ , իր Աղալօն ուր եւ լինի , պէտք է տուն դառնայ եւ կերակուր պահանջի : Ուրիմն , ի՞նչպէս նա իւր առաջին գործը ճաշի հոգուը չանէք , ի՞նչ պէս իւր «բալուկի» սիրաը կոտրէք : (Մօր համար «բալուկ» կոչուածը , կաթնաասմիները դեռ չը փոխած մանուկ չը կարծէք . նա 22 ամառ , նոյնիքան էլ ձմեռ ճանապարհ դրած հաստավիզ երիտասարդ էք , բայց Աղալօն իւր մօր համար (ինչպէս եւ ամէն դաւակ իւրեանց մայրերի համար) միշտ մանուկ էք , բայտուկ էք եւ բալուկ էլ մինչեւ մահը մնաց) :

Դէզա Մաթօն իւր արհեստով միայն ոչխարի խաչ մաքրող չէր , նա մի ուրիշ չնորիք էլ ունէք . բայց այս վերջինից օգուտ չէր ստանում եւ միայն ուրիշներին էր օգուտ տալիս : Մաթօյի արհեստն երազ միկնելն էր : Ով ինչ երազ տեսել էր եւ տեսածին կասկածոտ սրտով էր վերաբերուել . նա իսկոյն շատառում էր Մաթօյի մօտ եւ , լաւ թէ վատ բաւակութիւն ստանում : Եւ հ՞րբ էր Մաթօն վճռապէս որ եւ է երազի վատ միկնութիւն տուել . կամ հ՞րբ մի բարի երազ ուրախ ուրախ բացատրել . ո՞ր մէկի սիրաը նա ուրախացնէք . կամ որի՞ն տրամեցնէք : Նա ոչ մէկի դրականապէս ոչինչ չէր ասում , միշտ երկդիմի խօսքերով առ հախ էր թողում . որինակ՝ մէկին ասում էր՝ «Էջ նստելը խելքի շատութիւն ու հարստութիւն է» . հետն էլ իսկոյն վրայ էր բերում . «Եթէ գործդ լաւ տեսնեա . կը հարստանաս» , թիւսին մեկնում էր , որ «Գըլիսի վրայ քարափից ցած գլորուելը նեղութեան մէջ ընկնել է» . բայց զգոյշ մարդի համար , անմիջապէս աւելցնում էր նա , «բաղդաւորու . թեան մէջ ընկնել կը նշանակիս : Հետն էլ օրինակ էր բերում չչը , որին գլորես գարու հորը . նու սկզբումը կը կարծի՝ վեսասուեց , բայց երբ կանգնի ու գարին տեսնի , կուրախանայ եւ կօրհնի իրան ցած գլորողին :

Երկու անգամ միայն իւր կեանքում դէզա Մաթօն ճիշդ երազ է միկնել . երկու երազն էլ իւր Աղալօյի տեսածներն էին . որոնց մեկնութիւնը նա յայտնել է երազները կատարուելուց յետոյ :

— Դէզի ջա՛ն , մի օր քնաատեղից զարթնեց Աղալօն . երազում տեսայ , որ մեր տանու քահանէն մի կարմիր խնձոր առ եց ինձ : Երկու անգամ հոտ քաշեցի . ամէն հոտ քաշելուս խնձորի միջից մի ուրիշ պրտիկ խնձոր էր զուրս գալիս , զու վերցնում էիր ծոցդ զնում : Երրորդ անգամին՝ հէնց որ պսարի խնձորն ու զում էիր ծոցդ զնել , յանկարծ երկնքից մի արծիւ թեւերը թափ տալով ցած եկաւ , կոցից զեռ առաջ միծ խնձորը , ճանդերով էլ ձեռիցդ խլեց պսարի խնձորն ու ամպերը բարձրացաւ :

Դէմա Մաթօն դլուխը կախեց , իր սովորական աղօթքը փնթփնթաց եւ կաց ու կամ անելով՝ պատասխանեց . «Երազահանը գրում է , որ օրը կիրակի է , երազը սուտ է» :

(1) Թիֆիխոս մամէն օր կէս օրին ժամը 12ին թնդանոթ են արձակում :

Աղալօն բաւականացաւ , առաւ իստակած խաշերն ու գնաց ծաւիկու . իսկ Մաթօն որդու հետանալուց յետոյ՝ երկու ձեռքը բարձրացրեց , մի քանի անգամ իր զլիսին առւեց ասելով . «Քո մէրը մեռնի՛ , քամբաղդ բալուկս» :

—

Երկու տէրտէր էին Քարափի թաղի եկեղեցումը , երկուսն էլ միասին ուսում առած , միասին մնացած , միասին ձեռնադրուած , բայց ոչ միանման վարք ու բարքով :

Տէր Առաքելը պաշտօնին արի , համեստ , ժամասէր , անշահասէր , մարդասէր քահանայ էր . ընդ հակառակն տէր Կիրակոսը յանդուզն , պաշտօնից փախչող , ամիսներով ժամի երես չը ահսնող , շահամոլ , կռուարար եւ այլ գատապարաելի յատկութիւնների տէր երեց էր :

Վեր էր կենում վազ լուսագէմին տէր-Առաքելուն եւ իւր առաւանեան աղօթքը մաքումը որոճելով՝ գնում էր եկեղեցին :

Խոմիացնում էր ժամի ժամանակ անկողնում տէր-Կիրակոսը և ժամերգութեան փոխարէն՝ երբեմն երբեմն երազի մէջ հայնոյական խօսքիր արտասանում :

— Բնչի՞ցն է :

— Որովհետեւ պառկում էր երեկոյին իւր ժամանակին աէր-Առաքելը ու «Եկեղեցն» մրմնջալուց յետոյ՝ առանց վրդովիցուցիչ եւ կողմնակի մտածմունքների , գոն իւր վիճակից , հանգիստ քուն էր լինում . մինչեւ որ իւրեանց հաւանոցի աքաղաղն ու պատի ժամացուցի միջի յոսոպ թռչունը մինը «կիկէլիկի» կանչելով , միւսը «բու բու» հնչեցնելով , չը հասկացնէին իրան . թէ «ժամ է պաշտել զտէր» :

— Որովհետեւ կէս զիշերից շատ անց զլուխը ծանրացած , աչքերն ուռած , նոթերը կիսած (խոփոսուած) , անէծքներ ու հայնոյանքներ մըթմրթալով՝ տուն էր գալիս աէր-Կիրակոսը , գրպանումն ունեցած բանալիով . խարիսափելով դուռը բաց անում եւ գնում առանց շորահան լինելու՝ անկողնի վրայ ընկնում :

— Ո՞ւր էիր մինչեւ հիմա , անաշէնի երե՛ց , վախվախելով հարցնում է ճնշուած ու տրորուած տիրուհին , որր մինչեւ իրիցի զալը հարիւաւոր անգամներ փողոցն է նայել եւ կրկին ներս մտել եւ բարձին թիւնկնած՝ կէս քուն , կէս արթուն նրա ճանապարհն է սպասել :

Երիցկնոջ պատասխանը քահանայի երազի մէջ դանդաղած ափեղցիկ հայնոյարանութիւններն էին լինում :

— Թագաւորով զոյդ : երեք աս , կամ տուզ , չորս աղջիկ , երեք ու գոյց եւն . եւն . (1) . կամ թէ ես տարայ . . . զու խարդախեցիր . . . անըզ . գա՞մ . . . խարերայ . . . զումարբաղ . . . արբեցողը զո՞ւ ես . . . վաս բըռնի՛ր . . . Դաշա՛ , թո՞ղ . . . կիզա՛ , մօսա արի . . . քո կենա՛ցը եւն . եւն . (2)

(1) Թղթախաղի մէջ դործածելիք բառեր . (2) Թղթախաղի առթիւ ծագած անբաւականութեանց իւ զեղխութեանց բացականչութիւններն են :

— Ա՛յս Աստուած , ե՞րբ պէտք է էս մարդն իր թղթախաղից . զումարբազութիւնից , արբեցողութիւնից եւ չար ճանապարհից յետ դառնայ , լալով մամտում էր մտամոլոր տիրուհին եւ հառաչելով վերջացնում այս տիրուր բացականչութիւնով .

— Խե՛ղճ իմ երեխէ՛ք . . . .

— Ախար , ա՛յ տէրտէր , էդ ի՞նչ է քո գրութիւնը . ի՞նչ է երեսիդ վէրքը , ո՞ր տեղ ես ցեխոտուել . գզզզուած մազերով ու խճընուած մօրուքով վայրենի գազանի ես նմանում , մինչեւ ե՞րբ , յանդիմանում էր միւս օրը իրիցկինը .

— Եշան-օրհնէք ունէի , պստկատանն էի , ճանապարհին ոտքս սայթաքեց , ցիսի մէջ վայր ընկայ , երկու խօսքով կարճ պատասխանում էր տէր-կիրակոսը , եթէ միւս առաւտօն ուրախ տրամադրութեամբ էր դարթնում , եւ , աւելացնում էր ստորաքարչ ժպիտով .

— Սիրուն իրիցկինու , եթէ չես հաւատում , ահա տես քեզ համար որքա՛ն աջահամբոյր եմ բերել :

Տէրտէրը հանում էր գրպանից թղթախաղում տարած փողերն եւ կնոջ առջեւը փոռում :

Իսկ եթէ երեցը տարուած էր յինում , կամ քսակի վերջին կոպէ-կը անվայել տեղերում չույզած , այսպիսի դէպքերում՝ նա կամ աչքերը գետին ձգած՝ լուսում էր եւ կամ կնոջը հայնոյելով տանից դուրս դնում :

Բաղդաւոր էր տէր-կիրակոսը . ժողովուրդը զիաէր նրա զիշերաշրջիկութիւնը , տեսնում էր նրա եկեղեցի չը յաճախելը , բայց ոչ ոք նրանից չէր նեղանում : Չէր արանջում նմանապէս նրա ընկեր տէր-Առաքելը . նա շատ անգամ տէր-կիրակոսի զանցառութեան տուոծ պաշտօնները ուրախութեամբ կատարում էր՝ եւ ստացած տուրքը ամրողջովին նրան հասցնում :

Այս բանը վերագրելու է տէր-կիրակոսի կեղծ ու պատիք բնաւորութեանն եւ չողոքորթ հաճոյախօսութիւններին . առանց «Ճան»ի խօսք չէր ասիլ . երեսին հայոյում էին , նա ծամածոռութիւններով եւ ժըպիտներով էր պատասխանում . ինչպէս ասած է , օձի լեզու ունէր անիծածը . մինչեւ իսկ իւր ընկեր տէրաէրին «միծ տէրտէր Ճան» էր վերաձայնում :

Եւ էնց այդ ճարտար լեզուի համար էր , որ ամէն ոք տէր-կիրակոսի զեղծումներին ներողամտարար էր վերաբերուում : Իսկ հասած աղջրկանց աէր ծնողները , մանաւանդ տէր-կիրակոսի հետ կամայ ակամայ կապ պէտք է պահէին :

Հարկաւոր չէր յիշեցնել աղջկատափոյիլ , որպէս զի քահանան գըլ-խի ընկնէր աղջկայ բաղդաւորութիւնի համար գլուխը յետ դրած հօր , առաւել մօր արած ակնարկներին : Տէր-կիրակոսն իսկոյն ծոցից հանում էր իւր յիշատակարանը , կամ իւր խօսքով «Յայսմաւուրը» եւ արդէն

որոշ թուահամարի տակ վաղուց գրուած աղջկայ անուան դիմացը նշանակում էր աալիք բաժինքի : փողի եւ իւր միջիմարդութեան կարական հասուցումը :

Թող ապահով լինի այնուհետեւ հարսնացու աղջկայ ծնողը : որ շուաթէ ուշ , տէրտէրի ձեռքով փեսացուների ցանկում յիշուած երիտասարդներից մէկն ու մէկը իւր ընտանիքի մերձաւոր անդամը - իր փեսան պէտք է դառնայ :

Տէր-կիրակոսի մի ուրիշ պակասութիւնն ընդհանրութեանը վիրաւորանք էր պատճառում , բայց եւ այդ զգալի էր զիխաւորապէս տուժող փոքրամասնութեանը . մեծամասնութիւնը դարձեալ աչք էր վակում եւ չը տեսնելու դնում :

Այս այն էր , որ տէր-կիրակոսը վաշխառութեամբ էր պարապում ծանր առկոսներ էր ստանում եւ նշանակած դրաւոկանը անշուշտ իրան էր սեպհականացնում :

Հոդիւոր վարչութիւնն անուեղեակ չէր տէր-կիրակոսի արարքներին , բայց պատճելու կանթ չէր զանում . տէրտէրն իւր գործողութիւնները հաստատապէս օրէնքի հիման վրայ էր ամրացնում եւ միշտ արդար էր գուրս գալիս :

Ուրեմն ընչու անհանդիստ անել մի հոգեւոր պաշտօնէի . որից ամէնքը գո՞ն են : Մինչեւ իսկ՝ յաճախակի է զրաւոր միջնորդութիւններ եղել տէր-կիրակոսի ծխականներից եւ քաղաքի աչքի ընկնող աղայական դասակարգից նրա վարձաւորութեան համար : Միջնորդութիւնը զուր չի անցել , ժամանակի շրջանում , ո՞ր տէրտէրը կայ , որ պճնըւած չը լինի քահանայական բոլոր պարզեւներով : Լանջական ոսկեզօծ խաչ , խառայ փիլոն , աւագ-քահանայութիւն , կամիլաւկայ , այժմ շքանշանութեան նշանակը կորցրած՝ տէրտէրութեան անհրաժեշտ նշանն են համարուել , ինչպէս Փարաջան ու մօրուքն են : Ընչո՞ւ ուրեմն տէր-կիրակոսը պիտի բացառութեանց կարգն անցնէր :

Այս՝ : աէր-կիրակոսն օժառուել էր տէրտէրական բոլոր պարզեւներով եւ իւր լանջական խաչը բազմիցս թղթախաղութեան մէջ աարուած ժամանակ՝ զրաւ էր գրել ու նոյն օրը . կամ մի քանի օրից ազատել :

Երեկոյ է , դէղա-Մաթօն ու Աղալօն ընթրիք են անում եւ ուրախ են : ընթրիքն այս երեկոյ սովորականից աւել շաայլ կերպարանք ու նի , չարեքանոցը (1) լիքը կախէթու կարմիք զինին շատ յարմարուած է էժանագին զուրկելի (2) հետ , որ տարւան մէջ հանդիսաւոր օրէրին միայն գնում էր Աղալօն թարախով զիխին դրած . փողոցները ման ածող կինաօյից (3) :

(1) Զարեքանոցը կաւէ փոքրիկ սամիոր է եւ զինու չափ : (2) Զուրկել աղացած ձուկն է . թիֆլիսցիններին սիրելի : (3) Կինտօ՝ զիխին մըրգեղէն , կամ այլ ուտեղէն դրած վաճառողն է կոչւում :

Աղալօն ուրախութեամբ պատմում է մօրը Բազագիանի մեծ վաճառական , լիքը մագաղինի տէր . աղայ Բախչիովի առասաձեռնութիւնը , Երկու օր յառաջ՝ Բախչիովն Աղալօյին մի հորթի ու գլուխ էր պատուէր տուել՝ իրան համար մաքրելու . Աղայ Բախչիովը հասարակ մարդ չէ , որ ոչխարի գլուխ ուտէ ; Նրա կերածը երկու ամսական նէմէցի կովի գիրացրած հորթերի ու ու գլուխներն է . ինչպէս երեւ ում է . Աղալօն էս օր աղա Բախչիովի ուրախ ժամանակն է նրա պատուիրած ու ու գլուխը տարած եղել . Հէնց որ աղէն մարիկ է տալի ձիւնի պէս սիպտակ ու ու գլխին . իստակ կրտած ու մաքրած՝ ուրախ ուրախ ձեռն է առնում հորթի գլուխն ու քիչ է մնում հում ուտէ ; Ապրիս , Աղալօ , ապրիս , գոչում է . Աստուած աւելի շնորհք տայ , հէնց էս սհաթիս թագի տակի (պտակի) համար քսանուէինգ արշին դագրանիցի թանգագին սիպտակ աթրազ ծախսեցի . ու ամէն մի արշինի մէջ մի մին մանէթ վասակեցի . քո իստակած հորթի գլուխն իմ աթրազից համ աւելի պայծառ է . համ փափուկ է . Հալալ է քեզ , մօրդ կաթի պէս , աշխատածըս մանէթներից երեքը . տա՛ր , յաւ . ճաշ սարքէ ու իմ կենացը խմէ :

Այս ասելով աղայ Բախչիովը երեք մանէթանոցը հանել է ծէրը թքոտ է արել ու Աղալօյի ճակատին կպցրել :

Այդ էր պտաճառը . որ Աղալօն լաւ գուրգելի . գինու . դօշի . սարթ պանրի ու խոզի խորովածի համար փող չէր խնայել եւ Մաթօ դէդէն էլ չը նեղացաւ իր որդու աւելորդ շոայլու թեան վրայ :

— Էս Աստուած ո'զջ պահէ աղայ Բախչիովին , նրա ո'զաղը չէ՞ն ու հաստա՞տ մնայ . օրհնեց Աղալօն եւ ուզում էր զատարկել լիքը բաժակը . որ գուռը բազխեցին :

— Ո'զ պիտի լինի էս վախտ . ցած դրեց զինու բաժակն Աղալօն եւ շատակեց դուռը բաց անել :

— Լաւ վախտ է զալիս՝ ով որ գալիս է . քո բնկերներից կը լինին . ասուց հեռացող որդու հասցէին Մաթօն եւ աւելացրեց . զոնքըչի սիրեկան կույի՛ :

Բարի ողջոյն . Մաթօ զէզի՛ . տնակնկալ ներս եկաւ եւ ողջունեց տէր-կիրակոսը :

Աստուած վասոց պահի՛ . տէր հայր ջա՛ն , զալդ բարի՛ . համեցէ՛ք . յա՛ : Ժամանակի ես եկել . աֆն ասան մայր ու որդի եւ թանգագին հիւրին սկզանի վերի կողմը բազմացրին :

— Աստուածով գործն յաջողում է , եւ ճի՛շդ . որ յարմար ժամանակի եմ վրայ հասել , ասաց տէրտէրն եւ ձեռքը ձգեց . վերցրեց Աղալօյի լիքը բաժակը :

— Մաթօ դէդա՛ , ալլահ վերդի՛ (1) . . . բայց ո՛չ , ես տէրտէր եմ , ինչ չի վայելիլ մուրքի խօսքով ալլահվերդի անել , որ դու էլ թուր-

(1) «Ալլահ վերդի՛ , եախչի եօլ բառերն ընդհանրապէս ընդունուած

քի խօսքով ինձ պատասխան տաս , թէ եախչի եօլ : Դրա հայերէնը կայ . գինի խմողը պէտք է ասէ «ընկալ քաղցրութեամբ» զիմացի մարդը պիտի պատասխանէ «մատիր գթութեամբ» : Դէ՛ս , զէդա Մաթօ , ընկա՛լ քաղցրութեամբ , կրկնեց քահանան :

— Մատնիր գոթութեամբ , տէրտէ՛ր ջան :

— Ճօ՛ պառաւ , ո՞նց թէ «մատնիր գոթութեամբ» : Էղ հօ կը նշանակէ մատներդ ուռչին , կուչ դան ու գոթանան :

— Ներողութիւն , տէ՛ր հայր ջան : Ես մի տխմաը կնիկ եմ , լեզուս չը պաըսեց , զու լիզուխ մի՛ մաիկ տալ , ոիրուս իստակէ է :

— Ուրեմն , Մաթօ դէղի՛ , նորից «ընկալ քաղցրութեամբ» կրկնեց տէրտէրն եւ աւելացրեց . էն գործի յաջողութեանը . ընչի համար որ եկել եմ :

— Զէ , տէրտէր ջա՛ն , իրիցի ձեռքը բանեց Աղալօն , էղ աղայ Բախչիովի կինաց բաժակն է , ես պիտի խմէի : Քեզ արժան եղաւ , խնդրեմ՝ անուշ անես ու քո օծած , մեռոնած բերնովզ աղայ Բախչիովի կեանքն օրհնես . տէրտէրի օրհնութիւն Աստուած շուտ կը լսի : մենք աշխարհականներս մեղաւոր անարժան ենք :

Եւ Աղալօն կարճ խօսքերով պատմեց աղայ Բախչիովի առատաձեռնութիւնը :

— Է՛ս օրհնա՛ծ , շատ էլ մեծ բան չի արել հաստափոր Բախչիովը : Հարիւրաւոր խեղճերի բերանի ողասաւը կտրել է ու քեզ իր փորի սիրու երեք մանկի ընծայել : Ես այս բաժակով քեզ մի էնպիսի բաղզաւորութիւն եմ բերում , որ անհանելի է եւ յաւիտենական :

— Զէ՛ , կարգիզ մեռնի՛մ , տէրտէր ջա՛ն , դեռ էղ թասովն աղայ Բախչիովի կեանքն օրհնի , մէկէլն էլ յետոյ կը խմենք :

— Թող քո ասածը լինի , կրկին յցրո՛ւ ուրեմն : Եւ երկրորդ բաժակը ձեռքն առաւ :

— Լսեցէք , Աստծու օրհնած մէր ու որդի՛ : ձայնը բարձրացրեց տէրտէրը , ձեզ յայտնի է , որ ես իմ ծխականներին՝ սեպհական որդւոց չափ սիրում եմ , նրանց բաղզաւորութիւնն ինձ համար ուրախութիւն է : այնպէս չէ՞ , Մաթօ դէղի՛ :

— Այո , տէրտէր ջա՛ն :

— Երկու տարուց աւել է , որ Աղալօն իմ ծոցումն ունեցած «Յայնմաւոր» տեարումը 99 թուակամարի տակ նշանակուած է :

Քահանան հանեց ծոցատերը եւ մասը գրեց մի զծի վրայ :

— Խօսքդ հրամանք արա՛ : տէրտէ՛ր , ասաց Մաթօն , քո սուրբ բերանի բառն ինձ համար զրից աւել է , զու լաւ զիտես , որ ոչ ես եւ իմ բալուկս գրի ու թզթի հոտ չենք առել :

Ին գինու բաժակով համակրողները միմիանց յիշելու ժամանակ : «Եախչի եօլ» ցանկացող երկրորդ անձը պարտական է ինքը նոյնպէս խմել :

— Իմ ծուխ Դալալ Մինասի աղջիկն էլ աղջիկների կարգումն է նշանակած , չարունակեց քահանան , եթէ չէք հաւատում , այ , էս խաչանչանից կարող էք իմանալ . էս խաչը դրուած է Մինասի աղջիկ Փէփէլի անուան գլխին : Խաչով նշանակածներս էնպիսի աղջիկներ են , համեստ , սիրուն , հալալ կաթնակերներ են . որոնց իրանց արժանաւորութիւնով իմ հարազատ աղջիկանց համար հարս կը բերէի . եթէ 100 տղայ ունենայի , 100 էղպէս աղջիկներից ոչ մէկին իմ դռնիցը դուրս չէի թողնիլ :

— Յետո՞յ , լուրջ հարց առւեց Աղալօն :

— Յետոյ էն , որ դու իմ ծուխն ես , իմ հոգեւոր տղին ես , Փէփէլին էլ իմ հոգեւոր աղջիկն է . հոգի առաւել է քան զմարմին , երկուսիդ երջանկութիւնն էլ իմն է եւ դու պէտք է Փէփէլին առնես :

— Շատ շնորհակալ եմ , տէրտէր ջա՞ն , բայց ես կնիկ առնելու ոչ միտք ունիմ , ոչ ժամանակ , կարճ կարեց Աղալօն :

— Մենք մեր գլուխը չենք կարում պահել , հաստատեց մայրը , հարս ի՞նչպէս կառավարենք :

— Հարսն ինքը ձեզ կը կառավարէ . քո շարչարանքներդ կը թերթեւացնէ . Մաթօ գէգի՞ : Իսկ դու , Աղալօ' , իմ որդի՞ . դու պէտք է աշխատես , որ այսուհետեւ քո մօր նեղութիւնը պակսացնես , մեղք է էս պառաւը , դու յաւուր դատաստանին պարտական կը լինիս , եթէ ազատ թոշունի նման քո ման գալուզ համար . մօրդ հանգստութեան մասին չը մտածես , էն ժամանակը քեզ ոչ յարութիւն կայ . ոչ թողութիւն , թէկուզ անօրհնէքներին տուածդ երկու ապասիների փոխարէն մանէթ տալու լինիս : Իմացի՞ր , Ելի մեղքդ չեմ ներիլ , սպառնաց քահանան :

— Ախար , տէր հա՞յր , պատասխանեց Աղալօն , քո կամք տեսած աղջիկը ոչ երեսին Աստծու տուած պատկեր ունի իւ ոչ փող ու բաժինք : սիրունութիւնը թող իրան կենայ , ինձ պէս խեղճ մարդն ի՞նչ իրաւունք ունի սիրուն նշանածի ման գալ , շաս էլ որ հրեշտակի կառը լինի , մեր տուն գալուց երկու օր յետոյ թազի տակի շորերը պիտի բօխչամիջի պահի ու հասարակ շթի հետ իր երեսն էլ սեւ գործլի շինի . մեր պէս մարդի կնիկն օրը մինչի իրիկուն կոները կշտած՝ պիտի իր տան մէջ տանտիկնութիւն անի , նրա մարդն էլ դրսեւը պիտի հին շորերի մէջ իշխ մշակութիւն անի : Յետոյ օրը որ մթնեց , երկուսն էլ պիտի ջարդուած , դադրած , ճրագը փչեն , աչքերը խփեն մինչեւ լուսադէմ : Էլ սիրունութիւնը ո՞ր օրի համար է պէտք : Սիրունութիւնն էլ , էս աշխարհիս ամէն բազգաւորութիւնն էլ Աստծուց բաժին է տուած ծոցերն ու ջիբերը տողած հարուստներին . նրանց ի՞նչ . ջանը դուրս գայ նրանց ծառաներինն ու աղասիններինը , թող նրանք եփեն , թափեն , շան պէս իրանց աղջիկներին ու հաղանդ պատենքն , ամէն ինչ իրանք անեն , իսկ աղջիկներին ու աղջիկներինը թող զարդարուեն , զլպլատուեն . կուշտ ու աղջիկներինը աղջիկներին ու իրար հետ սէր ա-

անեն , ջան ասեն , ջան լսեն , էդ սիրունութիւնի ետեւիցը ես , ինչպէս արդ արի , ընկնողը չեմ , բայց բանն էս է , որ ոչ հրամանոցդ կամ տեսած աղջիկը ոնց որ ասացի . իր հետ մի չոփ ունի մարդի աշխը կոխելու համար , ոչ ես հինգ գուշ յետ քցած ունիմ . մէր ու տղայ մեռնում ենք օր ու գիշեր ոտ ու զլու խ իստակելով ու ծախելով՝ էն էլ է՞նքան եմ տուն բերում , որ երկսխ վայնաշարի ցամաք հաց է առ լիս . վրայ երեք աղամարդու մեղքի տակ էլ որ ընկնենք , տուն բերենք , նրա՞ն ինչ պիտի ուտացնենք . կամ թէ ես ի՞նչ փողով պիտի հարսանիքի պատրաստութիւն տեսնիմ . հարսին զուգել զարդարել կուզէ , ի՞նչ տեղից . ի՞նչ գումարտով :

— Գումարն ես կը դանեմ , ա'յ որդի , փողի մասին զու հոգս մի՛ անիլ , ո՞ւմ զուոը թակեմ , ո՞ւմ մաս գնամ , որ 200 մանէթ իմ խաթեր քեզ պարաք չըտայ , էնքան լինի , որ զու եւ մայրդ մուրհակին սարագրէք եւ ձեր տունը մէջը նշանակէք : Եթէ քեզ էլ չուզեն այ փողաէրը հաւատալ , ես նրան մուրհակ կըտամ . քո պարաքն իմ վիզը կառնեմ :

— Յետոյ պարաքը ո՞ր տեղից վճարենք :

— էդ էլ հեշտ է , աշխատանքիցդ ինչքան յետ մեայ , օրական բեր ինձ պահ առ' ւր , մի երկու տարուց կը տեսնես , որ պարաքից էլ պրծել ես , սիրուն կնոջ աէր էլ ես :

— Ուրեմն փողն ուրիշինը կը լինի . իսկ հրամանքդ երես կը լինիս ու մեղանից քո անունով բարաթ (մուրհակ) կառնիս հա՞ , կարծեմ էզպէս ասացիր , աէր հա՛յր :

— Փողն ինձանից կսանաս , որդի՛ , իսկ մուրհակ կը դրուի իմ տիրացու Մարտիրոսի անունով՝ ես քահանայ եմ , ինձ վայել չէ փող պարաք տալը , որ խոսանվանք պահես , փողն է՛լ աիրացու Մարտիրոսիցը պիտի առնեմ :

— Դէզի՛ , հէնց իմանա՞ տեսած երազս կատարւում է , դարձաւ Աղաւոն մօրը :

— Հա՛ , որդի՛ , մեռնի՛ քո դէզէն , գրածը ջնջուիլ չի , մեր ձեռնիցն ի՞նչ կըգայ , հալբաթ Ասածու կամեցողութիւնն էդ է :

— էդ ի՞նչ երազ է , պատմեցէք ես էլ լսեմ , ես քեզանից լաւ կը մեկնեմ , դէզա Մաթօ՛ , հետաքրքրուեց քահանան :

— Ոչի՞նչ , աէ՛ր հայր ջա՛ն , չունքի զու քոս ոտովը շնորհք ես բերել , ինձ ամօթ է քո հրամանը զեաինը գցել , դնա դալալ Մինասին խօսք տուր . երբ կամենայ , նշանը տանենք . դէզուս նշանի մատնիքը դեռ կենում է :

— Երկաթը տաք տաք կը ձեծեն , չեմ թողնիլ , որ էս գիշերը լուսանայ , շուտ վեր կացէք , գնանք մատանիքը տանք , ես ուրիշ գործ էլ ունիմ , պիտի շուտ գնամ , մի պակ ունիմ այս գիշեր կատարելու :

(Ծարունակալի)

ՊԵՐՁ ՊԱՌԵԱՆՑ